

Ելենա ԵՐՁՆԿՅԱՆ  
Դիանա ՄՈՎՍԻՍՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

## ՀԱՍԿԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Հոդվածը նվիրված է հասկացման գործընթացի և ճշմարտության միջև կապի ուսումնասիրությանը: Հիմնվելով մի խումբ հասկացում արտահայտող բայերի բառարանային սահմանումների ու համատեքստերի վրա՝ ցույց է տրվում, որ հասկացումը սերտորեն փոխկապակցված է ճշմարտության և խորության հասկացությունների հետ: Այն ներկայացվում է որպես ճանաչողական փոխաբերության դրսևորում՝ հիմնված ֆիզիկական շարժման և տեսողության վրա:

**Բանալի բառեր.** հասկացում, ճշմարտություն, հասկացման խորություն, ճանաչողական փոխաբերություն, գոյաբանական փոխաբերություն, ցուցայնության կենտրոն, ուղղահայաց շարժում, տեսողության ունակություն

Ճշմարտությունը որպես կատեգորիա ոչ միայն փիլիսոփայության, այլև տրամաբանության, հոգեբանության, աստվածաբանության, ճշգրիտ գիտությունների, լեզվաբանության ամենավիճահարույց հարցերից է: Գոյություն ունեն բազմաթիվ, հաճախ իրարամերժ տեսություններ, մոտեցումներ և մեկնաբանություններ ճշմարտության վերաբերյալ:

Սույն հոդվածի նպատակն է հասկացում արտահայտող բայերի օրինակով ցույց տալ հասկացման և ճշմարտության միջև կապը: Այս համատեքստում դիտարկվում են երկու իմաստային դաշտերի բայեր: Հասկացման և ճշմարտության փոխկապակցվածությունը հիմնավորվում է *empathize, fathom, penetrate, bottom, dig, reach*, ինչպես նաև *see, read, view* հասկացում արտահայտող բայերի միջոցով: Առաջին խմբի բայերը ներկայացնում են առանձին միկրոդաշտ՝ պայմանավորված այն փաստով, որ հասկացում արտահայտող այս բայերին հատուկ է ուղղահայաց շարժման իմաստային հատկանիշը: Երկրորդ խմբի բայերին միավորում է տեսողության իմակը: Երկու դեպքում էլ հասկացման ամբողջ գործընթացը ուղղակիորեն զուգորդվում է ճշմարտության զաղափարի հետ, տեղի է ունենում մտավոր շարժում՝ մարդուց դեպի ճշմարտությունը: Իմաստային այս դաշտերի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հասկացման գործընթացը սերտորեն փոխկապակցված է ինչպես ուղղահայաց շարժման, այնպես էլ տեսողության ունակության հետ: Ասվածը հիմնավորենք Ջ. Լեյքոֆի և Մ. Ջոնսոնի խոսքերով. “As we go more deeply into an issue, we reveal more, which allows us to see more, that is, to understand more”, “Dig further into his argument and you will discover great deal” /Lakoff, Johnson, 2003: 103-104/:

Ինչպես արդեն նշվել է մեր աշխատություններում /տե՛ս, օրինակ, սույն հանդեսում նախորդ հոդվածը/ ճշմարտությունը մտավոր շարժման ցուցայնության կենտրոնն է: Որպես ցուցայնական բառեր՝ ուսումնասիրվող բայերով

արտահայտված հասկացման ձևերը հարաբերակցվում են ցուցայնության կենտրոնի՝ գործողության վերջնակետի՝ «ճշմարտության» բացահայտման հետ՝ ըստ այդմ ունենալով հասկացման տարբեր մակարդակներ: Ցանկացած հասկացման վերջնական նպատակը ճշմարտության ամբողջական բացահայտումն է, երբեմն այն սահմանափակվում է իմաստի, էության, առանցքային գաղափարների հասկացմամբ, որոնց դեպքում առնչվում ենք ճշմարտության մասնակի բացահայտմանը:

Նշենք, որ հասկացման և ճշմարտության միջև կապը գտնվում է ճանաչողական լեզվաբանության ուշադրության կենտրոնում: Այսպես, *Philosophy in the Flesh* հայտնի աշխատության մեջ նշվում է, որ այն ամենն, ինչ մենք որևէ իրավիճակում ընդունում ենք որպես ճշմարիտ, կախված է մեր՝ իրավիճակի նյութականացված ընկալումից/հասկացումից՝ մարդկային ընկալման բնույթից, հասկացություններից, հասկացությանից համակարգերից, լեզվում առկա փոխաբերություններից ու դրանց կիրառության առանձնահատկություններից, իրավիճակների ֆրեյմերից. “*Truth depends on understanding... There is no truth for us without understanding.*” /Lakoff, Johnson, 1999: 53-55/:

Անցում կատարենք փաստացի լեզվական նյութի քննարկմանը և փորձենք հիմնավորել հասկացման և ճշմարտության միջև սերտ փոխկապակցվածության մասին թեզը:

Ուսումնասիրվող բայերի սահմանումներում<sup>1</sup> հատուկ անդրադարձ է կատարվում ճշմարտությանը: Այսպես, *fathom* բայը սահմանվում է որպես *penetrate to the truth of*, իսկ *penetrate* բայը սահմանվում է որպես *arrive at the truth or meaning of*: *Bottom* բայի և *get to the bottom* դարձվածային արտահայտության սահմանումները նույնպես հիմնված են ճշմարտության գաղափարի վրա՝ *discover the truth of something about a situation; find out the true cause of; ascertain the entire truth*: Խոսելով *dig* բայի մասին՝ պետք է նշել, որ բառարաններում նույնպես անդրադարձ է կատարվում ճշմարտության գաղափարին՝ *find out, as by careful study or investigation; unearth, usually with up or out; dig out the truth*: Ինչ վերաբերում է *reach* բային, թեև բառարաններում ճշմարտության գաղափարն ուղղակիորեն չի արտահայտված, սակայն նշված բայի ածանցյալ *outreach* գոյականը սահմանվում է՝ հիմքում ունենալով ճշմարտության գաղափարը՝ *the act of reaching out; the outreach toward the truth of the human spirit*:

Ճշմարտության գաղափարը կենտրոնական է նաև տեսողական բայերի սահմանումներում: Այսպես, *see* բայը սահմանվում է որպես *discover or realize a usually obscured truth; confirm the truth of; penetrate to the true nature of, read* բայը՝ որպես *discover or make out true nature or mood of, accept the truth of someone's statements, view* բայը՝ որպես *something believed or accepted as true by a person*:

Ճշմարտության գաղափարն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն բառարանային սահմանումներում, այլև հաճախակի ի հայտ է գալիս հաս-

կացում արտահայտող ուսումնասիրվող բայերի խոսքային գործածություններում.

(1) This is not Tibet... Tibetans try to see death for what it is. It is the end of attachment to things. This simple **truth** is hard to *fathom*. But once we stop denying death, we can proceed calmly to die... /BNC<sup>2</sup>/

(2) Drawing in part on a recently discovered diary of his inamorata, Agnes Von Kurowsky, Richard Attenborough and a squad of writers attempt to *penetrate to the truth* of the tale in In Love and War. /BNC/

(3) They don't *dig for truth* as much as shape a desired version of it. /BNC/

(4) Only in Trnopolje and Omarska, they felt, were they beginning to *see the truth* beneath the facade of propaganda. /BNC/

(5) "It's enough," she whispered, looking away from his intense stare in case he *read the truth* in her eyes and recoiled from it. /BNC/

(6) In other words, in the context of an irrealist argument, where the very notion of **truth** as correspondence is *viewed* as unsalvageable... /BNC/

Շարադրածից հետևում է, որ ճշմարտության ընկալումը հասկացում արտահայտող բայերի հիմքն է, ճշմարտությունը հասկացման գործընթացի ուղենիշն է: Վերոնշյալ համատեքստերում ներկայացված են հասկացման գործընթացի տարբեր դրսևորումներ, դրանցից յուրաքանչյուրի դեպքում առնչվում ենք ճշմարտության բացահայտման տարբեր ձևերի:

Հաշվի առնելով ճշմարտության բացահայտման կարևորությունը հասկացման գործընթացում՝ անհրաժեշտ ենք համարում, համադրելով տվյալները, նկարագրել, թե ինչպես է ճշմարտության հասկացությունն արտահայտվում լեզվում:

1. Լեզվում *ճշմարտության հասկացությունը քողարկված է*, արտահայտվում է որպես անհասանելի, դժվարամատչելի երևույթ: Այն գտնվում է մեկ այլ տարածական իրականության մեջ, որտեղ պետք է մուտք գործել. *penetrate* – see through, perceive, understand (something *hidden* or complicated); discover the *inner* contents or meaning of; *bottom* – discover the real but sometimes *hidden* reason that something exists or happens; *dig* – bring to *light* or out of *hiding*; *see* – discover or realize a usually *obscured* truth; (sometimes *mystical*) foresee, predict, or prophesy; *read* – perceive or deduce a meaning that is *hidden* or *implied* rather than being openly stated; *view* – observe *deep* in thought:

Հատկանշական է, որ *fathom* և *reach* բայերը սահմանվում են *penetrate* բայի միջոցով՝ *fathom* – penetrate and come to understand; penetrate to the meaning or nature of, *reach* – penetrate to: Նշենք, որ կիրառելով բառային փոխակերպման հնարը (lexical transformation), ստանում ենք նույն պատկերը և հանգում համապատասխան եզրակացությանը:

Որպես եզրահանգում կարող ենք նշել, որ *հասկանալ* նշանակում է “*to reveal the truth of*”: լույս սփռել հասկացման առարկայի վրա՝ այն քողազերծելով ու դարձնելով տեսանելի:

2. Պահանջում է որոշակի ժամանակ, ջանք, աշխատանք, ուսումնասիրություն, հետազոտություն, *ըմբռնելի չէ առաջին փորձից*, ուղեկցվում է

տարբեր տեսակի դժվարություններով. *fathom* – understand (a difficult problem or an enigmatic person) after *much thought*; *penetrate* – succeed in understanding or gaining insight into (something *complex or mysterious*); achieve understanding of despite some *obstacle*; understand something as a result of *study or investigation*; *get to the bottom of (bottom)* – *investigate* and thereby *discover* the basic underlying meaning or purpose or reason for something; *dig* – *find* or *discover* by *effort* or searching; understand after *some initial difficulty*; work *hard*, discover information after *a search or investigation*; *reach* – achieve something after discussing it or thinking about it for *a long time*; arrive at after spending *a long time* and *a lot of effort*; attain to or arrive at *by effort, labour* or *study*; *see* – discern or deduce *after reflection*; understand or realize something *after a period of ignorance or misunderstanding*; *read* – *discover* or understand by characters, marks or features; *discover* or explain the meaning of; *view* – *survey* or *examine* mentally:

Փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անգլերեն լեզվամտածողության մեջ հասկացման գործընթացը բազմաշերտ է, կազմված է տարբեր փուլերից, ուղեկցվում է տարբեր տեսակի խոչընդոտների հաղթահարմամբ: Հասկացման առարկայի դերում, որպես կանոն, հանդես են գալիս բարդ երևույթներ, հասկացություններ, իրադարձություններ, իրավիճակներ և այլն:

3. Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ ճշմարտության հասկացությանը գումարվում է ևս մեկ հատկանիշ՝ *ճշմարտությունը տեղակայված է խորքում*, այն մակերեսային չէ: *Deep* ածականի՝ տարբեր բացատրական բառարաններում տեղ գտած սահմանումները հաստատում են, որ գոյություն ունի սերտ հարաբերակցություն խորության գաղափարի և հասկացման գաղափարի միջև՝ *deep* – profound or penetrating in awareness or understanding; difficult to understand; difficult to understand; complicated; difficult to penetrate or comprehend: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ *empathize, fathom, penetrate, bottom, dig, reach, see, read, view* հասկացում արտահայտող բայերին միավորում է խորության գաղափարը, որն իր արտահայտությունն է գտնում նաև համատեքստում՝ միաժամանակ ենթադրելով, որ այս բոլոր բայերին հատուկ է հասկացման որոշակի մակարդակ.

(7) That knowledge made the project all the more resonant for her and enabled her to empathize **more deeply**. /BNC/

(8) You'll love your children far more than you ever loved your parents, and - in the recognition that your own children cannot *fathom the depth* of your love - you come to understand the tragic, unrequited love of your own parents. /BNC/

(9) Who is right? The one who says the West. Why? Because the West is the enemy whose *depth* we must *penetrate*... /BNC/

(10) I think that in that report I *bottomed the depths* of human stupidity, if such a thing is possible. /BNC/

(11) “We are going to *dig deep* and then we will *dig deeper* to find the truth.” /BNC/

(12) Times when we all get down in the dumps, but God can always *reach deep* within us and put us back on our feet again /BNC/

(13) This is a joyful response to the spirit of the law, as we *see* its *deeper* meaning and wider application. /BNC/

(14) I don’t suppose many have *read it in depth*, cos to be honest, when do we read a rule when we don’t have to, unless we absolutely need it /BNC/

(15) If *viewed at a deeper* level, however, the underlying meaning of this variable brings to light an even more interesting, if more complex, relationship to party preference. /BNC/

Բերված օրինակները հիմք են ծառայում եզրակացնելու, որ անգլերեն լեզվամտածողության մեջ ճշմարտությունը խորքային հասկացություն է: Դա ենթադրում է, որ մակերեսային ամեն ինչ գրկված է բովանդակությունից, ճշմարտություն չի պարունակում, հետևաբար այն հասկանալու, ընկալելու կամ ըմբռնելու անհրաժեշտություն չկա: Նշվածն ավելի պատկերավոր ներկայացնելու համար մեջքերենք հետևյալ փոխաբերությունը՝

(16) *We are peeling back the last few layers of the onion as we reach for the truth* /BNC/:

4. Լեզվում ճշմարտությունն արտահայտված է *տարողության* (*container*) տեսքով, հետևաբար գոյաբանական փոխաբերության (ontological metaphor - G. Lakoff, M. Johnson) վառ օրինակ է: Այն ներկայանում է որպես ինքնուրույն տարածական իրականություն, այդ իսկ պատճառով ճշմարտության բացահայտման համար այնտեղ պետք է մուտք գործել: Դա հիմնավորվում է հասկացում արտահայտող բայերին հաջորդող հետևյալ մակբայներով ու նախդիրներով՝ *deep, deeper, further, further to, beyond, behind, in, to, into, out, towards, out, out towards, for, out for, up, through, etc.*

(17) “*Empathizing* involves, rather, putting another person *in yourself*, becoming another person’s habitat.” /BNC/

(18) Ann found it very difficult to tell, just as she had found it difficult to *fathom out* the workings of Martha’s mind. /BNC/

(19) Sometimes it is difficult to *penetrate beyond* aesthetic appreciation. /BNC/

(20) The arrangement of the signs and symbols is designed to encourage a deepening awareness of their “pointing-towards” character; the deeper we *penetrate behind* the scenes as it were of the various words and actions, the closer can they be seen to become because all alike are pointing towards that Mystery which is beyond straightforward conceptual understanding. /BNC/

(21) There is a hint of something else, too, when he considers the suggestion that, even though the senses take us no further than appearances, perhaps the understanding can *penetrate further to* the inner natures of things. /BNC/

(22) They’re so motivated, they *penetrate to* the core, making new equations,’ he says. /BNC/

(23) “I see where you *dig into* my mind and come up with something,” he said. /BNC/

(24) ... it was there that he discovered poetry from a welter of words in those plays; *to dig out* meaning from a nest of conventions. /BNC/

(25) Mike Luckovich must have had to reach into his box of ink pens marked “misinformation” *to dig up* the idea for his most recent pictorial stereotype. /BNC/

(26) When she was younger, and her thoughts couldn't *reach* any *further* than that. /BNC/

(27) Like Newman's university, West Point “educates the intellect to reason well in all matters, *to reach out towards* truth, and to grasp it.” /BNC/

(28) It is difficult *to see through* the vagueness now surrounding the Government's plans, but it is clear that ministers were both unprepared and uncoordinated... /BNC/

(29) And even Bernice, for all that she was a Professor and of course very learned seemed unable *to read* any meaning *into* the convolutions of colour. /BNC/

(30) But I did use and reinvent the world of the Baracks I grew up in, yet the point is that I was in my 20s when I wrote the book and it was *viewed through* the persona of a dying woman. /BNC/

Ընդգծված մակբայներն ու նախդիրները ոչ միայն հաստատում են, որ ճշմարտությունը լեզվում արտահայտվում է տարողության տեսքով, այլև ուրվագծում են մտավոր շարժման հետագիծը, շարժման բնույթը և վերջնակետը:

Ամփոփելով նշենք, որ գոյություն ունի շարունակական փոխադարձ կապ հասկացման, ճշմարտության և խորության գաղափարների միջև: Հասկացման գործընթացն ուղղակիորեն զուգորդվում է ճշմարտության բացահայտման և քննարկվող նյութը խորապես ընկալելու հետ: Գճմարտությունը, զուգորդվելով ուղղահայաց շարժման և տեսողության ֆիզիկական գործողությունների հետ՝ լեզվում ստանում է նյութականացված արտահայտություն: Խորության գաղափարը ճշմարտությունը բնութագրող հատկանիշներից է և սերտորեն կապված է հասկացման գործընթացի հետ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Բառարանային սահմանումները ուսումնասիրելու համար օգտագործվել են ժամանակակից անգլերենի մի շարք հեղինակավոր բացատրական բառարաններ (տե՛ս ցանկը):
2. Ուսումնասիրվող բայերի համատեքստերի օրինակները քաղված են Բրիտանական ազգային կորպուսից (British National Corpus – BNC), որը պարունակում է 100 միլիոն բառ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bühler K. Theory of Language: the Representational Function of Language. Amsterdam, the Netherlands: John Benjamins Publishing Company, 2011.
2. Lakoff G., Johnson M. Philosophy in the Flesh: the Embodied Mind and Its Challenge to Western Thought. New York: Basic Books, 1999.
3. Lakoff G., Johnson M. Metaphors We Live by. London: the University of Chicago Press, 2003.
4. Ерзинкян Е. Л. Дейкисис слова: семантика и прагматика. Ереван: Издательство ЕГУ, 2013.

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Cambridge Advanced Learner's Dictionary, 3<sup>rd</sup> edition. Cambridge University Press, 2007 (CALD) // URL: <http://dictionary.cambridge.org/>
2. Cambridge Academic Content Dictionary. Cambridge University Press, 2008 (CACD) // URL: <http://dictionary.cambridge.org/>
3. Collins English Dictionary, 7<sup>th</sup> edition. Glasgow: Harper Collins Publishers, 2007 // URL: <http://www.collinsdictionary.com/>
4. E. Cobham Brewer 1810–1897 Dictionary of Phrase and Fable, 1898 // URL: <http://www.bartleby.com/>
5. Merriam-Webster's Collegiate Dictionary, 11<sup>th</sup> edition. Merriam-Webster, Inc., 2003 // URL: <http://www.merriam-webster.com/>
6. Oxford Dictionary of English, 2<sup>nd</sup> edition, Revised / Soames C., Stevenson A. (eds.) Oxford: Oxford University Press, 2009 (OED) // URL: <http://www.oxforddictionaries.com/>
7. Random House Unabridged Dictionary, Random House, Inc., 1997 // URL: <http://www.dictionary.infoplease.com/>
8. Random House Kernerman Webster's College Dictionary, Random House, Inc., 2005, 1997, 1991 // URL: <http://www.thefreedictionary.com/>
9. Random House Dictionary, Random House, Inc., 2015 // URL: <http://www.dictionary.reference.com/>
10. The American Heritage Dictionary of the English Language, 4<sup>th</sup> edition. Houghton Mifflin Harcourt Publishing Company, 2000 // URL: <https://www.ahdictionary.com/>
11. Webster's American Dictionary of the English Language (1828 Facsimile Edition). Foundation for American Christian Education, 1967 // URL: <https://www.1828.mshaffer.com/>
12. WordNet 3.0 Thesaurus, Farlex Clipart Collection. Princeton University, Farlex Inc., 2003-2008.
13. British National Corpus // URL: <http://corpus.byu.edu/bnc/>

14. English Idioms // URL: <http://www idioms4you.com/>
15. English Wiktionary, a Wiki-based Open Content Dictionary // URL: <https://en.wiktionary.org/>
16. Macmillan English Dictionary // URL: <http://www.macmillandictionary.com/>
17. Rhymezone // URL: <http://rhymezone.com/>
18. The Wordsmyth English Dictionary-Thesaurus // URL: <http://www.wordsmyth.net/>
19. URL: <http://www.vocabulary.com/>

**Е. ЕРЗИНКЯН, Д. МОВСИСЯН – *Понимание как постижение истины.***— Статья посвящена изучению корреляции между процессом понимания и выявлением истины. Опираясь на словарные дефиниции и контексты употребления некоторых английских глаголов понимания, показано, что понимание тесно взаимосвязано с понятиями истины и глубины. Понимание есть проявление когнитивной метафоры, в основе которой лежит физический опыт движения и зрения/видения.

**Ключевые слова:** понимание, истина, глубина понимания, когнитивная метафора, онтологическая метафора, дейктический центр, вертикальное движение, способность зрения/видения

**Y. YERZINKYAN, D. MOVSISYAN – *Understanding as Revealing the Truth.***— The paper is devoted to the study of correlation between the two processes: those of understanding and revealing the truth. It is shown that understanding is closely related to and interconnected with the concepts of truth and depth. It is presented as an expression of cognitive metaphor being based on the physical experience of movement and the ability of seeing/perceiving.

**Key words:** understanding, truth, depth of understanding, cognitive metaphor, ontological metaphor, deictic center, vertical movement, ability of seeing/perceiving